

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Չէ՞ որ ամեն մի գրող ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրենից առաջ եղածների ազդեցությունների համագումար – մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորության հնցի մեջ ու ձուլում, ձևակերպում իր ճաշակով»:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

(1916)

Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, Ժամանակակից հայ գրականություն, ավանդույթ և նորարարություն, երիտասարդ հայ գրողներ, ստեղծագործ անհատ

Թումանյանական այս մեջբերումով է սկսում ակադ. Էդ. Ջրբաշյանն իր «Թումանյանը և հայ գրականության ավանդույթները» (1994) գիրքը, որտեղ մեզանում առաջին անգամ քննվում են ամենայն հայոց բանաստեղծի բազմազան ստեղծագործական առնչությունները անցյալի և իր ժամանակի հայ գրականությանը: Գիրքը պատմում է Թումանյանի «Նախորդների» (V դարի գրականությունից մինչև XIX դարի վերջը), «Ժամանակակիցների» (XX դարի սկիզբը) և «Հաջորդների» (Թումանյանի դերը հայ գրականության հետագա զարգացման մեջ՝ մինչև 30-ական թթ. վերջը) մասին: Դրանք պատմական շրջափուլեր էին հայ գրականության մեջ, որոնք հաստատեցին «հայ ազգային մեծ բանաստեղծի ժառանգության հարատևող նշանակությունը»:

Թումանյանի ստեղծագործության հավերժական արժեքն ու «հարատևող նշանակությունը» մշտապես գիտակցվել են հայ մտավորականության կողմից: Դեռևս Թումանյանի կենդանության օրոք՝ 1909-ին, ինչպես հիշում են ժամանակակիցները, Վահան Տերյանն իր համախոհների գրական շրջանակում նկատել է. «Թումանյանն էլ մեր Պուշկինն է, հայ ժողովրդի ամենապայծառ և մեծ բանաստեղծը»²:

1914-ին «Հայ գրականության գալիք օրը» հռչակավոր զեկուցման մեջ Տերյանը հայտարարեց. «...Հովհ. Թումանյանը ստեղծել է իր սեփական երկերը մեր պոեզիայի մեջ: Նա արդեն վարպետ է ամեն կողմով, մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգման: Նա կանգնած է իր հատուկ ճանապարհի վրա, որ լի է գեղարվեստական հրաշալիքներով,

¹ Էդ. Ջրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 1994, էջ 2:

² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, 1969, էջ 789:

սակայն նա կմնա իբրև մի ունիկում, և նրա ճանապարհը չի լինելու ապագա հայ պոեզիայի ճանապարհը»³:

1919-ին Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ Ստեփան Զորյանը հանդես եկավ բացառիկ կարևոր հրապարակմամբ՝ «Ո՞վ է Հովհաննես Թումանյանը»՝ իր իսկ առաջադրած հարցին տալով միանշանակ պատասխան. «Հովհ. Թումանյանը մեզ ներկայանում է իբրև համազգային քանաստեղծ: Հովհ. Թումանյանը հայ գրականության համար նույնն է, ինչ որ Պուշկինը ռուս գրականության»⁴:

XX դարի երկրորդ կեսին Թումանյանի ավանդույթների ստեղծագործական յուրացման դրսևորումները կարևոր թեմա է հետազոտության համար, սակայն մեզ այստեղ հետաքրքրում է հատկապես անկախության շրջանի գրականությունը, քանի որ հենց այս շրջափուլում են իրապես «շրջվում» գրական իրողությունները:

Հետաքրքիր է, որ նման հարցադրում առկա է նաև ռուս մշակութաբանների և գրականագետների հրապարակումներում՝ կապված Պուշկինի ավանդույթների հետ: Նկատի ունենք հրապարակախոս և մշակութաբան Անդրեյ Յաստրեբովի «Պուշկինը և դատարկությունը. Մշակույթի ծնունդը իրականության ոգուց» գիրքը (2012), որ մեծ աղմուկ հանեց գրական շրջանակներում: Հեղինակը արդի գրականության մեջ առանձնացնում է խոտանի հսկա մի զանգված և դրան անդրադառնում է առանձին գլխում՝ «ԵՍ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՄ ԳՐԱԿԱՆ ՄԱԿՈՒԼԱՏՈՒՐԱՅԻՆ»: Ա. Յաստրեբովը մշակութային հեղափոխության կոչ է անում՝

- Պետք է առաջին հերթին երկրում կարգի բերել մշակույթը:
- Պետք է կյանքի կոչել ամեն մի լավ գաղափար:
- Մեր պայմաններում անգործությունը ազգային ինքնասպանություն է:
- Պետք է վերակենդանացնել հին հարցերը՝ «Ի՞նչ անել», «Ո՞վ է մեղավոր»:
- Խոստովանենք՝ մենք ամեն օր խեղդում ենք մշակույթը, ոչնչացնում նրա Ոգին:
- Ընտրություն չունենք. կա՛մ նոր օրերում ընտրում ենք Պուշկինին, կա՛մ հայտնվում ենք մշակութային դատարկության մեջ⁵:

Ո՞ՒՐ Է ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Նմանություններն ակնհայտ են. մենք էլ փնտրում ենք մեր Թումանյանին, քանի որ առանց Թումանյանի մենք ապագա չունենք:

³ Վահան Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, «Հայաստան» հրատ., Ե., 1975, էջ 72:

⁴ Ստ. Զորյան, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 12, Ե., 1990, էջ 94:

⁵ А. Ястребов. Пушкин и пустота. Рождение культуры из духа реальности. М., Рипол., 2012.

Գրական-պատմական պրոցեսն անհնար է պատկերացնել առանց ավանդությունների ստեղծագործական յուրացման և զարգացման: Ավանդություն ու նորարարությունը հակոտնյաներ չեն, «այլ մշտապես իրար հետ կապված և իրար ըստ ամենայնի լրացնող հասկացություններ», նկատում է ակադ. Էդ. Ջրբաշյանը⁶:

Դեռ 1954-ին գրականագետ Արամ Ինճիկյանը, Թումանյանի ժառանգությունը համարելով «անթառամ ավանդներ» մեր նոր գրականության համար, շեշտում էր. «Ամեն անգամ, երբ խոսք է բացվում հայ դասական գրականության ավանդների օգտագործման մասին, առաջին հերթին մեր առջև բարձրանում է Հովհ. Թումանյանի պայծառ ու հմայիչ կերպարը»⁷:

Սակայն արդեն 1960-ականներին շատ բան փոխվել էր. պոետների նոր սերունդը՝ «Ինտելեկտուալ պոեզիայի հետևորդները», «գրականությունից դուրս է հանում» հայ դասականներին:

Ո՛ր է Թումանյանը ժամանակակից գրականության մեջ: Նախապես ճշտեմ, որ այս հոդվածում նպատակ չունեմ ներկայացնելու արդի գրականության ողջ համապատկերը կամ անդրադառնալու բոլոր հեղինակներին. դա նաև հնարավոր էլ չէ: Իմ նպատակն ընդամենը մեկն է՝ ներկայացնել թումանյանական ավանդույթն այսօր և նրա նշանակությունը արդի գրականության մեջ, ընդհանուր խոսակցություն բացել այդ ավանդույթը «կրողների» և թումանյանական ավանդույթից «հեռացողների» մասին, երևույթ, որ օբյեկտիվորեն առկա է մեզանում: Կարևորը խոսակցություն բացելն է: Փորձել եմ ներկայացնել երևույթը՝ արտահայտված տարբեր սերունդների գրական դեմքերով, որոնցով, հասկանալի է, չի սպառվում արդի գրականության բարդ ու բազմադեմ համապատկերը:

Ուրեմն սկսենք մեր որոնումները՝ հետևելով մեր գրական կյանքի քննարկվող դեմքերին: Համացանցը, մշակութային մամուլը, գրական մրցանակները այս առումով առատ նյութ են տալիս:

Ահա և առաջին տեքստը, որ ընդառաջ եկավ.

ՄԱՐԴՈՒ ԺՊԻՏԸ

Մարդու ժպիտը խառը կանաչի է:

Նրան հրամայվեց չխանգարել տեսքը քաղաքի, ժպտալ

Վարդի պես կամ վարդագույն շենքի:

Մարդը փորձել է խոսել ռեհանի, գինձի,

Ու սամիթի մասին,

⁶ Էդ. Ջրբաշյան. Գրականագիտության ներածություն. Բանարվեստի հիմունքներ, ԵՊՀ հրատ., Ե., 2011, էջ 69:

⁷ Արամ Ինճիկյան, Մտերիմներ և մտորումներ, «Հայաստան» հրատ., Ե., 1967, էջ 257:

Բայց քշվեց մայթից, քաղաքից դուրս:

Ինքն էլ թռավ երկրից անդին:

Հիմա օտար քաղաքում ժպտում է,

Փշոտ վարդի հանգույն⁸:

Հեղինակը Էդվարդ Միլիտոնյանն է՝ ճանապարհի անցած, բազմաթիվ գրքերի հեղինակ, մրցանակներ ունեցող գրող: Թումանյանի հետ որևէ առնչություն... պարզ է՝ այստեղ չկա: Իսկ մեջբերված տողերը շատ են քննարկվել, տարբեր կարծիքների արժանացել⁹: Ահա ինչու իրավունք ունենք այս «պոետական ոճը» զննել, առավել ևս, որ այն շատ բնորոշ է արդի հայ պոեզիայի մի շարք ներկայացուցիչների: Այն համարվում է «նոր», և որքան ցանկալի կլիներ այս «նորի» մեջ տեսնել Թումանյանի հետքը, բայց այն չկա ու չկա... Միլիտոնյանի այլ ստեղծագործություններում ևս:

ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԻՆՔՆԱՍԻՊՈՒԹՅՈՒՆ

Պատահական չէ, որ այսչափ կարևորում ենք գրական ավանդույթի և ժառանգորդության խնդիրը. բանասիրության մեջ ընդունված է այն համարել գեղարվեստական նոր արժեքների ստեղծման հիմք: Ա. Բուշմինն իր «ժառանգորդությունը գրականության զարգացման մեջ» ֆունդամենտալ աշխատության առանցքում դրել է հենց այդ գաղափարը. որքան խորությամբ է գրողն ընկալում նախորդ գրական փորձը, այնքան ինքնատիպ ու բարձրարժեք են նրա ստեղծագործությունները¹⁰:

Բանաստեղծ Արտեմ Հարությունյանն իր պոեզիայի դոմենը միշտ բաց է պահել կյանքի առջև, բայց Հարությունյանի կյանքը բոլորովին նման չէ մեր տեսած կյանքին. այստեղ հեղինակը թափառող բոմժ է՝ անառակ որդուն

⁸ <https://granish.org/edvard-militonyan-e/>: Հրապարակելով այս տեքստը՝ խմբագրությունը նաև տեղեկացնում է. «Գրանիշ» կայքը սկսում է հրապարակումների նոր շարք: Հաջորդաբար մեր ընթերցողներին ենք ներկայացնելու ՀՀ պետական մրցանակի առաջադրված գրքերից հատվածներ՝ նպատակ ունենալով ընթերցող հասարակությանը ավելի լայն հնարավորություններ տրամադրելու՝ այսօր ստեղծվող և պետական մրցանակի հավակնող գրականությանը ծանոթանալու, գնահատելու և արժևորելու: Մյուս կարևոր նպատակը՝ պետական մրցանակների ներկայացված գործերը փակ, ներքին քննարկումների ոլորտից առավել տեսանելի, հանրային ոլորտ տեղափոխելն է:

ՀՀ պետական մրցանակի հավակնորդ՝ Էդվարդ Միլիտոնյան, «Է» բանաստեղծությունների ժողովածու, Երևան, Ծիծեռնակ, 2013:

⁹ Տե՛ս <https://blognews.am/arm/news/186528/khary-kanachin-ev-hayastani-groxneri-miutyuny-mi-dasti-mej.html>, նաև՝

Ի՞նչ է գրական իշխանությունը, <https://www.facebook.com/groups/247091375462089/permalink/308619195975973/>:

¹⁰ А. Бушмин, Преемственность в развитии литературы, Л., 1978, с. 101.

որոնող, ուսանողներն այստեղ գիրք չեն կարդում, այլ երագում են գիջություն անել... Ինչո՞ւ է այսպես: Հիմա արդեն պարզ է նաև մեր որոնման իմաստը. մենք փնտրում ենք Թումանյանի հետքը ոչ այն նպատակով, որ ակնկալում ենք, թե արդի պոետները նրա նման պիտի գրեն, մենք ուզում ենք, որ մեր գրողներն ընդամենը հայ գրականության ավանդույթներին ծանոթ լինեն, նոր հետո գրեն: Որովհետև մեծ գրողի գրածը «կարդալուց հետո» հազիվ թե ծնվեն նման «քերթվածներ».

ԿՈՐՄՎԱԾ ԱՇԽԱՐՀՆԵՐ

*դառնալով մարմնիս մեջ թափառող բոմժ,
կորցրեցի Անառակ Որդուս,
որ տուն էր գալիս իր նման
անառակ աղջիկների հետ միասին,
որ ներխուժելով ստալինյան ժամանակներում
կառուցված գրողների միության սիգայանձ
շենքի բնակարանս,
պահանջում էին փող և «Միգարոն»,
նաև դեռևս Սովետական Միությանը պատկանող
բնակարանիս մի մասը (լավագույն մասը),
որ որոշել էի հենց այնպես տալ
երեք սիրառատ ուսանողների,
որ աղջիկ չգտնելով սիրո համար,
աստվածաբանության մի այլ ուսանողի հետ
տրվում էին գիջության:*

*...երբ սպասում էի ժամադրությունից ուշացած մի կույսի
(այդպես ներկայացավ նա այդ օրը),
բայց հետո պարզվեց սեքսի զգացում չունի,
և հաճախ էր օգտագործել յուր հեշտոց...¹¹*

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔԱՐ

Թումանյանից կարելի և պետք է սովորել միշտ: Նաև այն, թե ինչպես պատկերենք մեր իրականության մերժելի երևույթները: Բենեդիկտ Մարնովը պատմում է, թե ինչպես կազմեց իր գիրքը՝ նվիրված 90-ական թթ. մեր կյանքի աղետալի ձևախեղումներին. գիրքը սուր քննադատություն է պարունակում... բայց բացվում և փակվում է... Պուշկինին նվիրված հոդվածներով¹²: Ազգային մեծությունը կողմնացույց է և փորձաքար:

¹¹ Արտեմ Հարությունյան, Հուդայի արձակուրդը, ՀԳՄ հրատ., Ե., 2003, էջ 59-61:

¹² Бенедикт Сарнов, И где опустишь ты копыта? М., 2007, с. 8.

Տեսնենք ինչպես է վարվում մեր հաջորդ հեղինակը՝ Հուսիկ Արան.

Apocalypso

*Իմ երկիրը՝ արևելյան թերմացք,
նեխելու է կեղծիքի մեջ ու ստի,
կեղտից-կեղտ սողալու է ճապաղ
ու չի բարձրանա իր կղանքից վեր:
Անսպիտակեղեն, մնալու է ցեխին տապկած՝
թների տակ սարդոստայն ու ոչ մի թռչող երազ.
մեր փախուստն է աշխարհում՝ էլք դեպի ներս,
որ ճակատագիր է այլևս, ոչ թե հեզնանք¹³:*

Այս տեքստը «քննադատական» բովանդակություն ունի, նաև «ցնցող ասելիք»: Հեղինակը դժգոհ է և՛ իր ժամանակից, և՛ իր երկրից, և՛ այն ամենից, ինչ կատարվում է իր շուրջը: Իր երկիրը նմանեցնում է թերմացքի, ինչ մնացել է կեղտոտ սեղանին. այդ մնացորդը ... հեղինակի երկիրն է: Այդ երկիրը սողում է՝ կեղտոտ հետքեր թողնելով իր ճանապարհին: Կղանքի մեջ է այդ երկիրը և չի էլ փորձում կղանքից դուրս գալ, բարձրանալ: Սպիտակեղեն անգամ չի տեսել, իր կյանքը քարշ է տալիս ցեխին կպած, ոչ մի երազ չունի, թներն այլևս չի շարժում, դրանից էլ՝ սարդոստայնները թների տակ: Սարսափելի պատկեր է. տեսնես ո՞ւմ նկատի ունի հեղինակը: Իր երկրի մասին է խոսում, ԻՐ ԵՐԿՐԻ: Սա մեր Հայաստանն է, սա՞՞ է մեր Հայաստանը: Մեր ժողովուրդը ծանր օրեր շատ է տեսել, ծանր ժամանակներ, բայց մեր գրողներից ոչ մեկի մտքով անգամ չի անցել այսպիսի բառերով խոսել երկրի ու ժամանակի մասին: Սա ժուռնալիստիկա է, բարկացած լրագրողի խոսք, նման արտահայտություններ կարելի է կարդալ համացանցում, մեր օրերի ֆեյսբուկյան գրառումներում:

Եթե հեղինակին այցելեր բանաստեղծական մուսան, այս տեքստը չէր գրվի, այսպես չէր գրվի: Եվ նորից մեր առջև հայտնվում է մեր Թումանյանը, որ իր ժողովրդի հետ անցավ դժոխքի պարունակներով, տեսավ մահ ու եղեռն, մարդու մեջ տեսավ զազանին, բայց անմաքուր բառերի չղիմեց երբեք: Ահա թե ինչու պետք է Թումանյանով ճանաչենք պոեզիայի գաղտնիքը, մի բան, որ Հուսիկ Արային չի հաջողվել:

Աղմուկ հանած գործերից է նաև Կարեն Անտաշյանի հետևյալ «ստեղծագործությունը»՝ «Ես էջ գող եմ»: Այս գործի մասին ես կլռեմ, թող ընթերցողը խոսի.

¹³ Չարվեստ – Չարwest.

<https://www.facebook.com/1145959212088496/posts/2765642033453531/>:

*Էշերին շինելը մեր գյուղում պատվաբեր էր,
 իսկ մարդկանց հետ նույն կերպ վարվելը՝
 ահավոր ամոթալի:
 Մի տեսակ չեմուչումով էին ամուսնանում
 մեր գյուղի բոլոր տղամարդիկ,
 իրենց կանանց մի տեսակ քաշվելով էին սիրում՝
 աշխատելով հնարավորինս քիչ դիպչել ձեռքերով,
 ու կանայք էլ թաքուն, գլխիկոր էին հղիանում,
 ամաչկոտ, ահավոր ամաչկոտ
 երեխաներ էին լույս աշխարհ բերում միշտ՝
 միանգամից շիկնած-պատրաստ
 բոլոր հնարավոր դեպքերի համար¹⁴:*

Ես հարգանքով եմ վերաբերվում բոլոր հեղինակներին, ում մասին քննադատական խոսք եմ գրում, և այլ կերպ չի էլ կարող լինել՝ ՔՆՆԱԴՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ Է ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ: Եվ շատ կուզեի այս հեղինակների հետ մի անգամ գրուցել պոեզիայի, արձակի, դրամատուրգիայի, քննադատության մասին: Բայց չի ստացվել: Հարյուրավոր գրական երեկոներ եմ կազմակերպել, անձամբ հրավիրել իմ երիտասարդ գրչակիցներին. չեն եկել: Միայն մեկ անգամ առիթ եղավ խոսելու գրական հարցերի շուրջ մի երիտասարդ արձակագրի հետ, որ խոստովանեց, որ... գիրք չի կարդում:

¹⁴ Լրագրողի՝ «Էջ գողի մասին բանաստեղծությունն է՞լ է հմայություն» հարցին հեղինակը պատասխանել է. «Որոշ տկարամիտների կարծիքով՝ դա վիրավորանք է «հայ մեծ գրականությանն» առհասարակ, չէ՞ որ այն վեհի ու սովալլուկ տվայտումների մեջ է միայն «հայեցի»: Իրականում այո, այն նույնպես հմայություն է, որովհետև բանաստեղծությունը սկսվում է հետևյալ կերպ՝ Ո՞վ ես դու, հաջորդ արտահայտությունը՝ Ես էջ գող եմ: Մա ընթերցողին ներքին երկխոսության դրող խաղ է: Ես չգիտեմ՝ որքանով է հիմա գոթֆիլիայի պրակտիկան առկա հայոց լեռնաշխարհում, բայց մի քանի տարի առաջ, զինվորական ծառայության ժամանակ ծառայակից ընկերներից ոմանք միամտաբար գլուխ էին գովում կենդանասիրության փորձառություն ունենալու առիթով: Բայց ես այս տեքստը գրել եմ առաջին դեմքով եւ ոչ ի դատապարտումն այս մարդկանց կամ այս ավանդույթների, նույնիսկ ոչ ի պաշտպանություն կենդանիների իրավունքների (ծիծաղում է): Այստեղ խոսվում է մեզ համար շատ լուրջ՝ սեքսուալ ինքնահաստատման հարցը, որը զուտ մարդկային ազատության հետ խիստ առնչվող խնդիր է: Կենդանիների հետ սեռական հարաբերություններ ունենալու պրակտիկան մի կողմ՝ մեր տղամարդկանցից շատերը ամուսնանալու հաջորդ օրը գնում են խոպան ու սլավոնական ծագումով կանանց հետ լինելու փորձառությունը նրանց ավելի գայթակղիչ է թվում, քան իրենց կանանց սիրելը, այդպիսով բազմաթիվ են հայ «սեգոնային» զույգերը: Որոշները սիրելի կին ունենալուն զուգահեռ՝ «բոգի» գնալը նորմալ, օրինաչափ բան են համարում՝ իբրև էլի շրջապատի աչքում սեքսուալ ինքնահաստատման նշան»: Տե՛ս <https://www.aravot.am/2014/02/11/430354/>:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր գրականագիտությունը պետք է վերափոխվի. ստեղծել ենք անջրպետներ՝ հին գրականություն, նոր գրականություն, և նրանց միջև ժառանգորդություն չենք որոնում: Իսկ ահա հին գրականության մեծագույն մասնագետ Դ. Լիխաչովն իր հռչակավոր «Ռուս հին գրականության պոետիկան» գրքում հատուկ գլուխ ունի՝ նվիրված գրական ավանդույթի խնդիրներին, և հատկապես, թե ինչպես են զարգացնում հին գրականության գեղարվեստական սկզբունքները նոր շրջանի գրողները¹⁵:

Իսկ հայ իրականության մեջ «նորերը» գրում են՝ «հներին» չկարդալով, նրանց ավանդույթներն արհամարհելով, գիտելիք չունենալով, չգիտեն՝ ինչ է գրականությունը, բայց գրում են: Հայ գրականություն չեն կարդացել և գրում են: Այնքան են սովորել չկարդալուն, որ կարդալիս էլ իրենց անելիքը չգիտեն: Մարգարետ Ասլանյանը, ինչպես երևում է, ծանոթ է արտասահմանյան գրականությանը. ամեն գրվածքից մի տող մտապահելով, մի պատկեր վերցնելով այս ու այնտեղից՝ կցցում է մի տեքստ՝ լրջորեն կարծելով, թե սա ոտանավոր է.

*Քամին համբուրեց ստինքներդ՝
Յոթ ձմեռ թափելով արգանդից քո,
Էդելվեյսների պարտեզ դարձավ լեզուդ,
Եվ չմեռար խայթերից դեղին օձերի.
Ամռան արև կար ոտքերիդ արանքում ...¹⁶*

Մեր երիտասարդ հեղինակները շատ են ուզում զբաղվել գրականությամբ, բայց անհրաժեշտ ձիրք և պատրաստվածություն չունեն: Շատ գործեր թողնում են թարգմանության տպավորություն: Բանն այն է, որ շատերի աչքը դուրսն է, սևեռված են օտար արժեքներին, սովորում են միայն օտար գրողներից, երբեմն էլ առանց հասկանալու... արտագրում են հատվածներ օտարալեզու պատմվածքներից, բանաստեղծական հատորներից, վեպերից կամ էլ յուրովի վերաշարադրում են կարդացածը:

Տպագրվել է Հր. Մարիբեկյանի «Երկվորյակների արևը»: Վեպ է, արձակ գրվածք, այսինքն՝ արձակի արվեստ կարող ենք որոնել, և բերկրանքի պահեր են մեզ սպասում, ինչպես Թումանյան, Բակունց, Ջորյան, Մահարի կարդալիս: Ջուր հույսեր: Ահա.

«Արևի լույսի ներքո վառ երանգներով փայլատակող, անմիտ ինքնավատահությամբ սեփական սովերը կտցող թռչունը դեռ չգիտի, որ հաջորդ լուսաբացին էլ չի կանչելու. պապն ուզում էր մորթել միակ աքաղաղին, որ զարթուցիչի պես առավոտ կանուխ կուրությունից հանում էր իրեն. որդին վերադարձել է համրացած, հայրը որոշել է համրության մատնել հետագա

¹⁵ Д. С. Лихачев, Поэтика древнерусской литературы, М., Наука, 1979, с. 299-334.

¹⁶ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԷՍՔԻԶ. / Մարգարետ Ասլանյան, «Կարմիր քաղաքներ» գրքից:

բոլոր լուսաբացները, կտրել իր կուրության և լուսաբացների թելը: Ավելի ընկղմվել կուրության խավարում՝ մահվան հատակին ավելի մոտ:

Տղան մոտեցավ, որ բռնի արյուրին: Լռությունը լցվեց թևաբախումների ձայնով, որ հայրը չի լսում, բայց նայում է տղային փոշու լուսավոր ամպի մեջ՝ արադաղի հետևից վազելիս: Տղան փորձում էր բռնել արյուրին, որ հասցնում էր դուրս պրծնել ձեռքերից. փորձ էր անում թռչել, բայց թևերի ամենահուսահատ թափահարումով իսկ չէր հաղթահարում երկրի ձգողականությունը և հազիվ արևի ճառագայթներն էր հասցնում թոթափել իր թևերից¹⁷:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎԵՐԸՆԹԵՐՑԵԼԸ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է

Սարիբեկյանը բառարանից բառերը վերցնում, շարադրում է իրար հետևից, տեքստը անհույզ, անկենդան, սրտի, զգացումի շարժում ոչ մի տեղ չի երևում: Արհեստական, սարքված տեքստ է, հեղինակն ուզում է ցույց տալ, որ սովորել է օտար գրողներից, կարող է նրանց նման գրել: Այդքանը: Իսկ ընթերցողը որոնում է ոչ թե նմանակում, այլ հայերեն գիր, հայ հոգի: Կարդում ես, ու հանկարծ օդն սկսում է չհերիքել, գրականությունն էս ուզում. շտապ էլնում եմ, գրադարակիցս հանում Թումանյանի սրբազան հատորն ու ընթերցում. տողերը հնչում են երաժշտության պես, մարդկայնությունն կա, կարոտ ու արցունք.

«Մի երկու օրից ետը Համբոն գնում էր իրենց գյուղը:

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր: Կռան տակին տանում էր շորերը, որ մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում մի բուռ փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտան: Էն էլ երևի, քորոջ — Զանիի համար էր հավաքել ու պահել...

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, որ էդ միննույն ճամփով քաղաք եկավ իր Գիքորի հետ: Ահա էստեղ էր, որ նա ասավ.

— Ապի, ոտներս ցավում են...

Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու... Ահա էստեղ էր, որ ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա էն աղբյուրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...»:

Ենթադրում եմ, որ միտքս կուզեն չհասկանալ, և հատուկ դրանց համար կրկնեմ՝ ես չեմ ասում Թումանյանի նման գրեք (դա հնարավոր էլ չէ), ես ասում եմ՝ հայ կյանքի շունչը, ոգին արտահայտել սովորեք Թումանյանից: Ինչպես տեսնում եք, Թումանյան վերընթերցելը փրկությունն է... եթե զբաղվում եք արդի գրականությամբ:

¹⁷ <https://www.tiv1.am/6378.html>

Սակայն ամենից սարսափելին առջևում է՝ Նառա Վարդանյան, «Լուսինը թփերի մեջ» (հատվածներ). «Տաքսու վարորդի վրա գոռացի. «Զգույշ, ագռավ տրորեցիր»: Վարորդը, սիգարետը շուրթի անկյունում պտտելով, ասաց. «Քուր ջան, շատ ռոմանտիկ ես, տղամարդու սև տրուսիկ ա, խի ես խառնվել իրար»:

Խելյազար Շողերը զուգարանից դուրս գալիս հետույքը մաքրած թուղթը հետն էր վերցնում, միջանցքում սիրուն ծալում, գրպանն էր դնում...

«Դե արի, արի իմ սիրուն աղջիկ, արի աղոթենք լուսնին, ավերդ բաց արա, ձեռքերդ վեր պարզիր, գայլի նման ռոնա: Տես լուսինն ինչ սիրուն է, ոնց որ տուտուզիկդ լինի թփերի տակ չիշիկ անելիս»:

...Գնում էի իմ ձերմակ պտուկներով մահացած Շողերի մոտ: Գևորգին շատ էի ուզում ասել, որ եթե ինձ փնտրելու լինի, չգնա Շողերենց տուն: Չասացի: Իզուր: Երևի ենթագիտակցորեն ուզեցի ինքն էլ տեսնի փորի վրա մահացած կնոջ զավեշտը: Շողերն ինձ միշտ մի երազի մասին էր պատմում, իբր իրեն փորի վրա են պատկեցնում դագաղի մեջ, ես էլ մտածում էի, երևի սեքսում պատավիհիս սիրած դիրքն էր:

...Դրամապանակիս մեջ Շողերը հետույքը մաքրած զուգարանի թղթերից էր դրել... Դրամապանակիցս կեղտի հոտ էր գալիս»¹⁸:

Նույն հեղինակը «Սրբիչը» պատմվածքում պատկերում է հոր և դստեր... սեռական կապը: Մի առանձնակի հաճույքով Նառան նկարագրում է «դեպքը», որ առաջին անգամ տեղի է ունեցել «իր մեղքով»: Պատմում է, թե ինչպես հայրը նայեց իրեն «ցանկացող հայացքով», թե ինչպես հայրը անհամարձակ գրկեց իր ազդրերը, ինչպես դրանից իր մարմինը հաճելի խոնավացավ...

Այս է ամբողջը՝ մի բովանդակագուրկ պատմություն, որ դեռ երկար պիտի հիշվի իբրև արդի գրականության և երիտասարդ արձակագրուհու ամոթալի էջ:

Ինչո՞ւ հնարավոր եղավ այս ամենը: Անվերահսկելիության, գրական գործիչների անպատասխանատվության հետևանքով ծովեց մեր գրական ընթացքը: Նույնիսկ մարդիկ, որ սկսել էին տաղանդով, մեկեն փոխվեցին, ազատությունը շփոթեցին անաստվածության հետ, տենդագին սկսեցին սդոցել այն ճյուղը, որի վրա նստած ենք բոլորս: Իմ գրական ընկերներից մեկը, որ վճռական պայքար էր մղում անբարո գրականության դեմ, հանկարծ ինքը տպագրեց «Գրական թերթում» մի պիղծ գրվածք, իմ հարցին էլ պատասխանեց, որ հույս ունի այդպես մի մրցանակ ստանալ:

Գուցե պատճառն այն է, որ այլևս չկա գրական միջավայր, որ զսպիչ դեր ունենա: Այլպես ինչպես բացատրել, որ իր խոստումնալից գրական մուտքից հետո արձակագիր Գուրգեն Խանջյանը... վերածվեց պիղծ գրականության «առաջնորդի» ու կազմակերպչի: Ահա նրա ներկայացմամբ Թովմաս առաքյալի մենախոսությունը... խաշի սպասելիս.

¹⁸ <https://inknagir.org/?p=2705>

«Խաշն ի նչ էղավ, արա՛, է՛, առավոտ բարլուսով ուզում եք կատաղցնե՞ք, չեմ հասկընըմ... Թե՛ տեղը չեք բերըմ... Դավայ դե, այ մատուցող, արագացրա, սոված մեռանք, հազար գործ ունենք օրվա մեջ, պարապ չենք, դավայ... Էս քաղաքի օբյեկտները լրիվ հարբզած են, ախպեր: Տենաս էսի ո՛ւմ օբյեկտն ա...»

... Հա, ուրեմս, ինչ մեղքս թաքցնեմ, ախպեր, կասկածըմ եմ էս մեր Ուստին, կարող ա իսկականից ճշտով տղայա, բան չունեմ ասելու... Խատյա լիչըն էս իմ վրա մեղք չեմ գզըմ, ախպեր, որտև գլխանց իրան ասել եմ՝ էս գործի մեջ որ մըտնըմ եմ՝ մեջն ի նչ ունեմ, ուստա, ինքն էլ բա՛ հանգիստ էղի, ամեն բան լավ ա ըլելու»¹⁹:

Խանջյանի «Նստիր Ա գնացքը» գրքի մասին իր ընդգծված բացասական կարծիքը գրականագետ Դավիթ Գասպարյանն արտահայտեց իր իսկ հոդվածի վերնագրով՝ «Մի նստիր Ա գնացքը»: Գ. Խանջյանի վեպը, ըստ քննադատի, չունի ասելիք, չունի հասցեատեր և որևէ նորույթ չի բերում: Եվ, իսկապես, գիրքն ավարտելուց հետո ընթերցողին մնում է միայն տարակուսել՝ ի՞նչ իմաստ ունեին այս պատահական կապերն ու դեպքերը, որ ներկայացվում են գրքում, մի՞ թե հարբեցողությունն ու անկանոն սեռային հարաբերությունները կարող են գրքի «գաղափար» համարվել: Եվ վեպի «հերոսին» ուղղված հարցը՝ «Դեհ, գոնե Աստված ներկա՞ է ձեր գրվածքներում», նույնչափ ուղղված է նաև հեղինակին, իսկ պատասխանը արտառոց է հնչում՝ «Հուսով եմ, որ իմ գրածն է ներկա Աստծո մեջ»: Այս գրքում ամեն ինչ կարելի է. հեղինակի համար Աստված չկա... Տգեղ պատկերներ ու կերպարներ, շան ներկայությամբ շնանալու ցանկություն, նկարիչ, որ վրձինը թաթախում է սեփական կղանքի մեջ ու նկարում, լեզվական անգրագիտություն, փողոցային բառապաշար. ահա ինչն է քննադատում գրականագետը²⁰:

Դավիթ Գասպարյանին Խանջյանը պատասխանեց, ինչին էլ հետևեց գրականագետի երկրորդ արձագանքը՝ «Գրողի հուսահատության ծամածոնված ճիչը»: Գրականագետն արդարացիորեն նկատում է, որ մեր արդի գրականությունը հայտնվել է «մասնագիտական անվերահսկելիության» կործանարար ընթացքի մեջ. գրողները կյանքը ներկայացնում են իբրև հիվանդ ու արատավոր ճահիճ և այդ աղբի վրա աղբ են ավելացնում իրենց «գրվածքներով», ասելիքի բացակայությունը փորձում են լրացնել «սեռաճարակ նկարագրություններով», իսկ դասական գրականությունը մնում է չբացված, չհասկացված, չընթերցված, դասական գրողներն էլ՝ այլևս «դիակ»²¹:

¹⁹ <https://inknagir.org/?p=2709>:

²⁰ Դավիթ Գասպարյան, Երկնային շուշան, «Զանգակ», Ե., 2004, էջ 365-377:

²¹ Նույն տեղում, էջ 377-381:

«ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՅՑ ԴՈՒՐՄ ԵՆ ՀԱՆՈՒՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ»

Բանից անտեղյակ ընթերցողին կարող է թվալ, թե սա «նորի» և «հինի» ավանդական կոնիվն է, բայց մեր գրական ճահճում ծլած «նորը» ոչ միայն «նոր» չէ, այլև հնամաշ ու մերժված «հինն» է՝ մերժված դեռ ֆուտուրիստների ժամանակներից, այն ֆուտուրիստների, որ ուզում էին «արդիականության նավից դեն նետել զենեքալ կլասիկներին»...

Հետո գիտեք արդեն՝ ինչ եղավ: Հետո եղավ այդ ճանապարհն արդեն անցած Չարենցի դատավճիռը՝ «Պատգամը», որ Մահարին «Չարենց-նամե»-ում հիշում է այսպես.

«Ես հերքեցի Տերյանին և ստեղծեցի իմ գրականությունը, բա ինչո՞ւ դուք ինձ չեք հերքում, եթե ուզում եք ձեր գրականությունը ստեղծել...»

Հարցն ուղղված էր մի երիտասարդ գրողի ու ինձ:

Չարենցը ձեռների մեջ խշրտացրեց թագրեհր և մի ումպ թեյ խմեց.

– Ասենք, ես ի՞նչ խեղ տեսա հերքելով, որ դուք ի՞նչ խեղ տեսնեք: Ի՞նչ հերքել: Տերյանին ո՞նց կհերքես: Միայն տպված լո՞ւր, թե՞ դիսկուսիոն հողված է Տերյանը, որ հերքես: Տերյանը մի ամբողջ կուլտուրա է: Կուլտուրան հերքել չկիրնի:

Մի բան պիտի հասկանալ, – չլինեք Հովհաննես Հովհաննիսյանը, Թումանյանը՝ Թումանյան չէր լինի, ոչ էլ Իսահակյանը՝ Իսահակյան: Իսկ եթե չլինեին Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը՝ Տերյանը Տերյան չէր լինի: Չլինեք Տերյանը, ես՝ ես չէի լինի, էս մի բանը լավ հասկացեք:

Հիմա անցնենք ձեզ. դուք պիտի շարունակեք այնտեղից, որտեղ ես վերջացնում եմ:

...Թագրեհր նետեց գրասեղանին, նայեց մեզ իր արտահայտիչ աչքերով և խորամանկ ժպտաց.

– Մեռա ձեզ խելք սովորեցնելով»²²:

Այս ամենը պետք է իմանալ, իմանալ և հաշվի առնել համաշխարհային գրականության և հայ իրականության փորձը: Այլապես այն տպավորությունն է ստեղծվում, որ ասպարեզ են եկել մարդիկ, որ ստեղծագործելու ձիրք ու տաղանդ չունեն, գիտելիք չունեն, փորձ չունեն, կարող են միայն մի բան՝ հերքել, վարկաբեկել, հարձակվել հեղինակությունների ու դասականների վրա:

Բայց դա էլ արդեն նոր չէ. դեռ 60-ական թվականներին Հրանտ Թամրազյանը գրում էր հայ «դատողական պոեզիայի մոլոր հետևորդների մասին», որ «գրականությունից դուրս են հանում Թումանյանին, Իսահակյանին ու Տերյանին»²³:

²² Գուրգեն Մահարի, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 5, Ե., 1989, էջ 501:

²³ Հրանտ Թամրազյան, Պոեզիան պատմության քառուղիներում, «Հայաստան» հրատ., Ե., 1971, էջ 228:

Մենք հեռացել ենք մեր ավանդություններից. հայ հին մշակույթի «հայկակա-նությունը» չի հետաքրքրում «նորերին», այն «հնացած է»: Եթե կարողանային կապել միմյանց մեր մշակութային «դարաշրջանները», այսքան աղքատ կլինե՞ր մեր ներկան²⁴:

Ի՞նչ է կատարվում մեզ հետ, իզվե՞լ է վերջնականապես սերունդների կապը: Իր «Գրական հերկերում» գրքում գրականագետ Սուրեն Աղաբաբյանը համոզմունք էր հայտնում, որ «Թումանյանն է այսօր ժամանակակից գրականության ամենակենդանի աղբյուրը»²⁵: Այդպես էր անցյալ դարի 70-ական թվականներին, բայց այդպե՞ս է այսօր:

Մեր պտույտը արդի պոեզիայի աղմկոտ փողոցներով հակառակ պատկերը բացահայտեց. Թումանյանն իսկապես դառնում է մի «ունիկում», ինչպես կանխատեսել էր Տերյանը դեռ 1914-ին, և «նրա ճանապարհը չի լինելու ապագա հայ պոեզիայի ճանապարհը»:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Դեռ վաղ է եզրակացություն անել, քանի որ մեզ դեռ սպասում են «Թումանյանականները», որ բարեբախտաբար կան: Եվ «Թումանյանական» գրողների շարքը ուզում ենք բացել Լևոն Ջավախյանով: Այս տաղանդավոր արձակագիրը նույնպես մի յուրօրինակ «ունիկում է» արդի հայ գրականության մեջ: Մի քիչ մի կողմ քաշված, գրական աղմուկներից հեռու, ինքն իր գործին, բայց միշտ գրականության մեջ է: Իր գրքերը տպագրվում են, ընթերցող լայն լսարան ունեն, իր գրականության համեմատ ժամանակակից արձակի բազում էջեր ողորմելիորեն դատարկ ու կեղծ են թվում: Գրում է իր տեսածն ու լսածը, ժողովրդի բերնից առնում է խոսքն ու գիրք դարձնում: Կարող է թվալ, թե ընտրել է հեշտ մի ճամփա, բայց դա այդպես չէ: Ահա այստեղ է, որ բացվում է Թումանյանի հետևորդի իր նկարագիրը: Ինքը ժողովրդական խոսքի տարերքի մեջ է, ինքն այն է, ինչ գրում է, ոչ թե հետևում է ժողովրդական խոսվածքին ու ոճին, այլ տարիների տքնանքով, արյան կանչով, ապրած կյանքով, կրած նեղություններով, տեսած ուրախություններով, հարագատ մորից լսած խոսքի շնորհիվ հասել է այդ մակարդակին, որ ասում ենք պարզ բառով՝ ժողովրդական: Նույնիսկ ընտրության կարիք չկա այս միտքն ապացուցելու համար. բավական է թերթել իր գրած ամեն մի էջը, և դրանց միջից կբացվի ու կերևա, կլսվի ու կտարածվի Թումանյանի շունչը: Ահա «Մոր նամակն իր անարժան որդուն», որ գրական տեքստ է դարձել գրեթե առանց փոփոխության.

«Բարևագիր

Նախքան նամակիս բուն իմաստին հասնելն ընդունիր քո մոր սրտից բխած քաղցր ու կարոտալի բարևները: Լյովիկ ջան, եթե հարցնելու լինես իմ

²⁴ Դ. Ս. Лихачев, Прошлое – будущему, Л., «Наука», 1985, с. 82.

²⁵ Սուրեն Աղաբաբյան, Գրական հերկերում, «Հայաստան» հրատ., Ե., 1974, էջ 87:

որպիսությունը, ես լավ եմ, ձեր ողջությունն եմ ցանկանում:

...Էլի լավ ա, էրկու-իրեք ամիսը մին էրեսդ տենում եմ, թռռներիս կարոտը առնում, սիրտս հովացնում... Մնացած վախտն էլ, թե կողքիս չես, նկարդ ինձ հետ ա ու ինձ հետ, բոլ-բոլ երեսիդ եմ մտիկ տալիս ու մեր տխուր ու ուրախ օրերի կարոտն առնում: Լևան ջան, որդի, մենակ թե մենակ եմ, մենակ, էս ա, գիշերն էկել, սև ագռավի պես թևերը փռելա, ես ոնց որ մութ վանդակն ընկած մի պառավ բռնավոր: Չորը լիքը ձեն ա...»²⁶:

Ահա Լևոն Ջավախյան գրողի ոճի գաղտնիքը. ինքնությունն է ու ինքնատիպ, ողջ հայ գրականության մեջ բոլորից տարբերվող և իր այդ ուժեղ բառերին, ձայնին, արվեստին հասել է Թումանյանի ավանդույթի ստեղծագործական յուրացման շնորհիվ:

Թումանյանը «ունիկում» է, պիտի միշտ կրկնեմ Տերյանի բնորոշումը, ինչին լիովին համաձայն եմ: Բայց մի «ունիկում» է, որ լուռ ու տիրաբար իշխում է հայ հոգիների վրա: Դառնում է ապրում, տեսարան, ձայն ու երկիր, գրականություն ու գիրք: Ես կգարմանայի, եթե ժամանակակից գրականության մեջ իմ ամենասիրելին՝ Հրաչյա Սարուխանը, չխոստովաներ, որ ինքն էլ Թումանյանի աշխարհի բնակիչն է: Ինչպե՞ս կարող էր Հրաչը «Թումանյանական»-ը չգրել.

*Շնորհակալ եմ,
Անտերունչ ծտե՛ր,
Որ վստահում եք
Ու մոտիկ գալի...*

*Ե՞ս ում վստահեմ
Երկրում էս անտեր՝
Ո՞ւմ մոտիկ գնամ
Էսքան սրտայի²⁷:*

Ես տեսնում եմ այդ սքանչելի պահը, երբ ստեղծվել է այս հրաշքը: Ամիսներով տանը փակվող բանաստեղծ՝ բակում կամ պատշգամբում շրջապատված «անտերունչ ծտերով», որ անսխալ զգացել են, որ իրենց մոտ կանչողը Պոետ է, էն էլ ի՛նչ Պոետ, ու առանց վախի, վստահելով եկել, շրջապատել են երջանիկ ու մենակ Հրաչյա Սարուխանին: Էս սրտի ջերմությունն է, իրար հանդեպ մեր վստահությունն է Թումանյանը, որ Հայաստանը դարձնում է Հայի Տուն: Թումանյանը միայն գաղափար չէ, բառ ու տեքստ չէ, Թումանյանը Հայոց Ոգին է:

²⁶ Լևոն Ջավախյան, Ծնկան ծերին, «Լուսակն» հրատ., Երևան, 2018, էջ 67:

²⁷ «ՆՈՐ-ԴԱՐ» համազգային հանդես, 2014, հ. 4, էջ 38 (Համարն ամբողջությամբ նվիրված է Հրաչյա Սարուխանին, կազմողներ՝ Աբգար Ափինյան, Ալեքսանդր Ղումաշյան):

Այդ է պատճառը, որ Թումանյանի աշխարհին իր տունը սարքած Մարուխանը մի բանաստեղծություն ունի՝ ինքն իրեն ուղղված՝ «Ինքնուղերձ», որ վերնագրել է «ԼՈՌԵՅՈՒ ՊԵՍ».

*Մեպտեմբերյան ծննդաբույր մի գիշեր
Դու էլ հանկարծ երագ եկար Աշխարհին,
Ինչպես անթիվ ու անհամար ուրիշներ՝
Էահողով գոյարանում աշխարհիկ:*

*Երագ եկար... Ու քանի դեռ կենսազարդ
Առկայում ես տևողության ոլորտում,
Քեզ թվում է՝ մշտատեսիլ երագն այդ
Է՛ անսկիզբ քո սկզբից է հորդում...*

*Բայց հո գիտես, որ Աշխարհը պահ առ պահ
Վեր է թռչում իր արթմնի քնի մեջ,
Եվ մշտապես մի նոր երագ է առկա՝
Տևողության մի նոր սկիզբ ու նոր վերջ:*

*Ուստի, հոգի՛ս,
Ո՛Վ ԻՄԱՆԱ՝ Ո՛ՒՐ ԸՆԿԱՆՔ,
Լռեցու պես
ՔԱՆԻ՝ ՕՐՎԱ ՀՅՈՒՐ ԸՆԿԱՆՔ,
Նրա ասած
ՍԵՐՆ ՈՒ ՍԻՐՏՆ ԷԼ ԵՐԲ ՉԿԱ՝
Նրա նման
ԿՐԱ՛ԿՆ ԸՆԿԱՆՔ, ՉՈ՛ՒՐ ԸՆԿԱՆՔ...²⁸*

Բանաստեղծ Արմեն Մարտիրոսյանը սքանչելի էսսեներ ունի՝ նվիրված հայ գրականության գոհարներին: Եվ դրանց թվում՝ «Փարվանան»: Հոգևոր հարազատության մի աշխարհ է բացում գրողը, որ ուրվանկարվում է թումանյանական Ջավախքով, Փարվանայի լեզենդով, բարձրագահ Աբուլով: «Ճերմակ» է արքայի ամրոցը, և այս մակդիրը, ինչպես նկատում է Ա. Մարտիրոսյանը, արքայի և նրա ամրոցի բնակիչների հոգու մաքրության վկայումն է²⁹: Թվում է՝ իրական բան է արքայադստեր ցանկությունը. ով կրերի Սիրո անշեջ Հուրը, նրան էլ կընծայի իր սերը: Բայց ժամանակ է անցնում, անցնում են արքան և

²⁸ «ՆՈՐ-ԴԱՐ» համագրային հանդես, 2014, հ. 4, էջ 27:

²⁹ Արմեն Մարտիրոսյան, Ներկայում հանգրվանող անցյալ, Երևան, ՀԳՄ հրատ., 2010, էջ 24-27:

նրա չքնաղ դուստրը, Փարվանա կտրիճները, իսկ Հուրը ոչ ոք չի բերում, չկա: Արմեն Մարտիրոսյանի էսսեն այս ցավից է ծնվել. մարդուն տրված է կյանքն իբրև երջանկություն ու սեր, ու հենց դա էլ հնարավոր չէ գտնել: Այս խոհերի մեջ Արմեն Մարտիրոսյանի պոետական հոգին է. ինքն էլ անվերջ փնտրեց Մեր-Երջանկությունն ու տառապեց անվերջ: Ինքն էլ երագեց «Ճերմակը», գրեց «Ճերմակ» սարսուռների, «Ճերմակ» մանկության մասին, իր բառերին առաջ-նորդեց դեպի մանկություն, ու դրանից «մի օրով էլ Ճերմակեց մանկությունը»³⁰: Թումանյանական է նաև, որ Արմենն իր ողջ կյանքն ապրեց «Երեխի նման».

*Ես գիտեի, որ քեզ կկարոտեմ մի օր,
դու՝ ծերերին տրված երեխայի հասակ
և խավարս ցրող վերջին իմ աստնվոր –
իմ ցուրտ գերեզմանին հալվող լուսապսակ³¹:*

Թումանյանական աշխարհի երկրպագուն է բանաստեղծ Արշակ Քոչինյանը՝ մի զուլալ, բնաշխարհիկ պոետ, որ իր ողջ ստեղծագործական կյանքում հավատարիմ է մնացել թումանյանական ավանդույթներին, գրականության հասարակական դերի, ստեղծագործության ժողովրդայնության թումանյանական սկզբունքներին.

«Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բեր...»
Հովհ. Թումանյան

*Լեզենդ դարձող հուշ է կյանքը ու անցյալ,
Որ մարում է անհունի մեջ ու մութի...
Վանաձորը՝ բնակառույց մի արձան,
Հորինումն է ստեղծարար կապույտի:*

*Հորինումն է ու հմայքը բնածին,
Որ բացվում է աչքերիս մեջ հոգնատանջ,
Որպես չքնաղ մերկությունը կանացի,
Որպես սիրո անմեկնելի երգ ու կանչ:*

*Խաչատուրի ապարանքն է, տես, անդալ,
Բարձրանում են գավաթները կենսաբեր,
Ու երգում է գիտնականը քեֆը լավ,
«Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բեր»:*

³⁰ Արմեն Մարտիրոսյան, Ժամերգություն, Երևան, «ՆՈՐ-ԴԱՐ» հրատ., 2001, էջ 23:

³¹ Արմեն Մարտիրոսյան, Ժամերգություն, Երևան, «ՆՈՐ-ԴԱՐ», 2001, էջ 97:

*Խլանում է սիրտը արբած գիշերի,
Ու գինեհար ոգիներն են թռվոում՝
Ջիների պես դուրս սողալով շշերից,
Որ փախչում են դեպի Անհայտն ու հեռուն:*

*Ու հիշում եմ ականայից երգը էն
(Ո՞նց մոռանամ տանջանքներս ծանրաբեռ)՝
«Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն սպասում. թասդ բեր»³²:*

ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՇՔԻ Է ԳԱԼԻՍ

Աշխարհը ցնցումների մեջ է: Եվ միակ փրկությունը նոր մշակույթն է՝ հիմնված հումանիստական գաղափարների վրա: Այդ շարժումը դեռ Հայաստան չի հասել: Մենք դեռ մրցանակներ ենք տալիս այնպիսի գրքերի, որոնց ոուս մշակութաբանն անվանում է «ԳՐԱԿԱՆ ՄԱԿՈՒԼԱՏՈՒՐԱ, ԽՈՏԱՆ»³³:

«Ի՞նչ ասելիք ունի այժմյան գրականությունը, որո՞նք են արդիական թեմաներն ու խնդիրները» հարցին երիտասարդ բանաստեղծ Դավիթ Ասատրյանը պատասխանում է այսպես. «Շատերը գրականություն բերեցին մի հոսանք, որը կոչվում է «Էլիտար գրականություն», այսինքն՝ մի բան, որը հասու չէ ժողովրդի լայն շերտերին: Այսպես սկսվեց ընթերցող-գրող անջատումը: Դրանից բացի, որոշ մարդիկ, չկարողանալով բավարարել իրենց սեռական բնագոյներն ու կրքերը, վերոնշյալ զգացողությունները դարձրին «գրականություն»: Եվ երբ նրանց ասացին, թե սա վատ է կամ զզվելի է, կամ առհասարակ կեղտ է, պատասխանը եղավ այսպես. «Սա ձեր խելքի բանը չէ, սա բարձր արվեստ է»... Եվ, չգիտես ինչու, բարձր արվեստի նշաձողը դարձավ անհասկանալիությունը, եւ ամեն բան, ինչ չկարողացան հասկանալ, ասացին՝ լավն է, բարձր է: Ովքեր ուղղագրություն չգիտեին, սկսեցին ասել, թե ուղղագրություն դնելը հետամնացություն է, ովքեր հանգ կապել չգիտեին՝ հանգը համարեցին հին, մի խոսքով՝ տաղանդի բացարձակ բացակայությունը սկսեց «հանձարներ» ծնել: Ինձ համար արվեստը գնում է դեպի ժողովուրդը: Արվեստը պետք է ծառայի ժողովրդին, այլ ոչ թե ծառայեցնի... Շատերին թվում է, թե արդիական նշանակում է սանձարձակ, գռեհիկ, բայց ոչ, արդիականը ճանապարհ է, որն

³² Արշակ Քոչինյան, Բեստիարներ. եռերգություն, «ՆՈՐ-ԴԱՐ» հրատ., Երևան, 2010, էջ 72:

³³ А. Ястребов, Пушкин и пустота. Рождение культуры из духа реальности, М., Рипол, 2012, с. 17.

անցնում է գրասեղանից մինչև ընթերցողի սիրտը»³⁴: Դավիթ Ասատրյանն իրեն համարում է «հայ դասական գրականության հետևորդ» և Հովհաննես Թումանյանի անունը շեշտում իր «Գրական հայրերի շարքում»³⁵:

Դավիթ Ասատրյանի «Հինգերորդ դարից լուսավոր մի հայր», «Համո Սահյանին», «Իմ լեզուն անցյալից է գալիս», «Գիտեմ՝ ինչից եք այսքան խեղճացել» և այլ ստեղծագործություններում երիտասարդ բանաստեղծը հռչակում է իր հավատո հանգանակը.

*Իմ լեզուն անցյալից է գալիս
Գրիչս անցյալից եմ առել
Եվ ինչքան էլ առաջ եմ գալիս,
Չի լինում այս նորով վառվել...
Չի լինում առաջ ընթանալ,
Չի լինում պոկվել անցյալից,
Չի լինում մի վայրկյան վերանալ
Չարենցից, Քուչակից, Սահյանից³⁶...*

«Թումանյանը ժողովրդի պաշտպան», «Ինչո՞ւ ենք Թումանյանին անվանում ամենայն հայոց բանաստեղծ», «Ճշմարիտ մտավորականը միշտ պետք է լինի իր ժողովրդի կողքին» հրապարակային ելույթներում երիտասարդ բանաստեղծ Մուսաննա Ղազարյանը հանդես է գալիս իբրև հայ դասական գրականության ավանդույթների պաշտպան և հետևորդ: Նա շատերի համար կարող է այսօր օրինակ լինել այն բանի, թե ինչպես պետք է կայանա երիտասարդ ձիրքը, ինչ գրական սկզբունքների հետևի: Իր գրական հավատամքն ազատությունն է, խիզախ ստեղծագործական նկարագիր ունի, հակադրվում է քարացած պատկերացումներին, նյութապաշտ կյանքին և համակերպվող մարդկանց աշխարհին՝ բարձրացնելով թռիչքի ձգտող, անձնվեր, հանուն մեծ վերափոխումների այրվելու գնացող Տրուբադուրի կերպարը: Իր գրական ճանապարհին հրապուրվել-հետևել է մեր դասականների՝ Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, հատկապես Չարենցի բանաստեղծական արվեստին, իր ստեղծագործություններում փնտրել նրանց հետ հոգևոր հանդիպումների հույս-երջանկություն.

³⁴ Սյունե Սևադա, «Արդիականը սանձարձակը չէ» (Զրույց երիտասարդ բանաստեղծ Դավիթ Ասատրյանի հետ), //www.aravot.am/2014/06/07/468293/:

³⁵ Լուսի Սարգսյանի հարցազրույցը բանաստեղծ Դավիթ Ասատրյանի հետ տե՛ս <https://lurer.com/?p=120586&l=am>:

³⁶ Դավիթ Ասատրյան, Վերադարձ դեպի Հարություն, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 2019, էջ 42:

ՉԱՐԵՆՅՅԱՆ

Իմ բառերը դաշունյնի պես պիտի փայլեն,
Մրալեզու թրի նման կտրեն պիտի,
Ես չեմ եկել մի անկյունում կո'ւչ գամ, լռե'մ,
Թող իմ բառը ճշմարտության հուրը լինի...

Իմ բառերը բալասան ու բոց պիտ լինեն,
Փլատակեն տաճարները անարգ ստի,
Ճշմարտության ապարանքներ պիտ կառուցեն,
Հոգիներին բաշխեն լույսը երանելի:

Խենթ բառերս պիտի հնչեն ամեն բեմից,
Կուլիսներում թող պահ մտնեն առնետները,
Չեմ վախենում ես մահացու կախադանից,
Թող հավերժի իմ Չարենցյան խիզախ գենը³⁷:

Այդ գրական հարազատության հետքերը հեշտությամբ կգտնի ընթերցողը Սուսաննա Ղազարյանի «Վաղը կգա», «Թոփչք» գրքերում՝ «Չարենցյան», «Չարենցին», «Հայրենի աշուն», «Ես երգելով կուզեմ ապրել», «Օրը» և այլն: Երիտասարդ ու կրակոտ խառնվածքի թելադրանքով միշտ թոչում է դեպի չարենցյան պոետական հորիզոնները, սակայն ամենից բարձր խոնարհումն ունի մեծ Թումանյանի առջև:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ծխում են օրերը դառը
Այն չիբուխը համբերանքի,
Որ քաշում էր մեր Մեծ Հայրը՝
Իր ցավի մեջ ու գրկանքի:
Մեր օրերն էլ դառն ու մութ են,
Հա'յր իմ, ապրեցինք հենց էնպես,
Մեր հոգում էլ հիմա ցուրտ է,
Պատգամեցիր՝ չապրել էսպես:
Այսօր էլ են թավադները
Չորան չատիներ կործանում,
Հա'յր իմ, ցավոք, քո խոսքերը
Մեր օրերում չեն հնանում³⁸:

³⁷ Սուսաննա Ղազարյան, Թոփչք, Համահայկական գրողների միության հրատարակչություն, Ե., 2019, էջ 7:

³⁸ Նույն տեղում, էջ 15:

Բանաստեղծ Տարոն Գլակը արդի գրականության թանկ անուններից մեկն է՝ ազնիվ մի ձայն, որ հնչեց մաքուր ու զուլալ, ինչպես արշալույս: Լեռներից իջնող մաքուր անուշակ է, որ գետ է դառնալու՝ ոռոգելու համար ճշմարտության կարոտ հոգիների չորացող եզերքը: Իր տարիքին ու հոգուն վայել՝ երգում է սեր, հոգու որոնում, ճակատագիր ու երագ: Բայց այս բանաստեղծի բուն տարերքը հայրենական երգն է: Այսօր ինքն է «հայրենի եզերքի քնարերգուն», մի բնորոշում, որ մեծ գրականագետ Արսեն Տերտերյանը գործածեց սխալ հասցեով: Այդ եզերքը պոետի համար հող հայրենին է, որ մնացել է մենակ: Եվ վերջապես այդ եզերքը հարազատ Լոռին է, որ Տարոն Գլակի հոգու հայրենիքն է. ինքը լռեցու հայացքով է նայում աշխարհին: Դեռ վաղ է Թումանյանի հետ խոր համադրումների գնալու համար, դեռ ժամանակ կա այդ վիթխարի մեծությանն ընդառաջ ելնելու: Բայց հիմա արդեն կարող ենք ասել, որ Տարոն Գլակի պոետական ուղին տանելու է նրան խոր ընդհանրությունների Թումանյանի աշխարհի հետ, որովհետև «ԺԱՄԱՆԱԿ ԶԿԱ».

*Ժամանակ չկա՝ լուսինն էլ հոգնեց
Աշխարհին այսպես երկար նայելուց.
Նույնն է ամեն ինչ, նույն պատմությունը,
Որը չի հոգնում անվերջ գրվելուց:*

*Մեկ-մեկ ուզում ես հասնել ոչնչին՝
Ոչինչը տեսնել ու կրկին ետ գալ,
Ու գուցե հետո աշխարհի շվին
Մի նոր մեղեդի փչի քեզ համար:*

*Երբեմն նույնիսկ սուրճը մշտական
Նույն գույնն է կրում ինչ որ աշխարհը,
Ուզում ես խմել, որ շուտ վերջանա
Քո այս տաղտկալի ողիսականը:*

*Ժամանակ չկա՝ այդպես է թվում,
Երբ արթնանում ես սիրելի քնից,
Ու նորից կյանքը գնացք է դառնում,
Իսկ քեզ չեն ասում, չեն կանչում՝ արի...*

*Եվ դու խորհում ես մոայլ ու երկար՝
Գուցե նայելով քո պատուհանից.
Որտե՞ն է կլինես արդյոք հարազատ
Ու քեզ չեն նայի իբրև օտարի:*

*Մի պատասխան է գալիս քո մտքին,
Որը քեզ այնքա՛ն դյուրին է թվում,
Կարծես ասում են մոլորված սրտիդ,
Որ դու կլինես հանգիստ շա՛տ հեռվում:*

*Ժամանակ չկա՝ լուսինն էլ հոգնեց
Աշխարհին այսպես երկար նայելուց,
Նույնն է ամեն ինչ, միշտ նույն հեռուն է,
Որը չի հոգնում խոստումներ տալուց³⁹:*

Մարիամ Խուրշուդյանն աչքի ընկնող անհատականություն է ժամանակակից գրականության մեջ: Նա շատ արագ հաստատեց իր տեղը գրական պրոցեսում, կազմավորեց իր ստեղծագործական նկարագրի և ոճի ինքնահատուկ յուրակերպությունը: Իր գրական ճանապարհին խարխափումներ չեն եղել. Մ. Խուրշուդյանը հավատարիմ է հայ գրականության դասական ավանդույթներին, շարունակում է մեր դասական արձակի ազգային ոգին և հումանիստական սկզբունքները:

Ժամանակակից գրականությունը դժվարին կացության մեջ է. շատ հեղինակներ աշխատում են շփոթահար անել ընթերցողին՝ գրական ճշմարիտ խոսքի փոխարեն ընթերցողին տալով անբացատրելի ռեբուսներ: Այս վտանգավոր միտումն էլ պատճառ եղավ, որ մեր ընթերցողը հեռանա մեր գրականությունից: Բարեբախտաբար, Մարիամ Խուրշուդյան գրողն իր հավատակից ընկերների հետ միասին գրականություն է բերում կյանքի ճշմարտությունը, գրական հնարանքը նպատակ չի դարձնում. իր հերոսը մարդն է, որ պաշտպանության կարիք ունի:

Հատուկ գնահատելի է Մարիամ Խուրշուդյան գրողի ոճը՝ բարդ խնդիրների մասին խոսել վճիտ ու խոր պարզությամբ. սա գրողի հավատամքն է: Իր ոճի մեջ նկատելի է, որ հեղինակը կին է. այնքան սրտացավ է ուրիշի բախտի հանդեպ: Իր լավագույն գրվածքներում արձակագիրը հայտնաբերում է կյանքի նեղություններից չարչարվող հոգիների ցավը, ցույց է տալիս մեր հասարակության դաժանությունը, փորձում հոգեպես սատար կանգնել իր հերոսներին:

Կանգնել նեղության մեջ հայտնված մարդու կողքին, սիրել ու հավատալ մարդուն. այս աշխարհընկալումով Մ. Խուրշուդյանը հարազատության արահետ է բացում դեպի Թումանյանի աշխարհը, ինչը բացորոշ երևում է «Անմեղ մեղավորը» հրաշալի պատմվածքում: Իր հերոսուհուն նկարագրում է այնպիսի գուրգուրանքով, որ հիշեցնում է Թումանյանի տխուր ու սիրով լի հայացքը Մարոյի կյանքը պատմելիս: Վարդուշը՝ խելոք, սիրուն, կարմրաթուշ

³⁹ Տարոն Գլակ, Պատերազմում, Երևան, «Վան Արյան», 2020, էջ 56:

Վարդուհին՝ արդի հայ արձակի ամենահաջողված կերպարներից մեկը, հայ աղջկա կատարյալ գեղեցկությունն ունի, բայց վայրենի միջավայրում պիտի կործանվի՝ խոր կսկիծ առաջ բերելով ընթերցողի հոգում⁴⁰:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայտնի գրականագետ Դ. Բլազոյը ճիշտ այս վերնագիրը կրող իր գրքում պատմում է, թե ինչ եղավ Պուշկինից հետո: Մեջբերում է միայն մի մարդու վկայություն՝ Գոգոլի: Իր նամակներից մեկում Գոգոլն իր վիշտը համարում է ամենից մեծը ողջ Ռուսիայում, քանի որ կորցրել էր ամեն ինչ. «Իմ կյանքը, իմ բարձրագույն երջանկությունը չքացան նրա հետ... Երբ ես ստեղծագործում էի, տեսնում էի իմ առջև միայն Պուշկինին... Ոչինչ չէի ձեռնարկում առանց նրա խորհրդի... Ոչ մի տող չէր գրվում, եթե ես չէի պատկերացնում նրան իմ առջև: Ի՞նչ դիտողություն կանի, ի՞նչ կասի նա...»⁴¹:

Այս հարցում էլ նման են իրար երկու հանճարները՝ Թումանյանը և Պուշկինը: Եվ եթե հավատում ենք մեր գրականության մեծ ապագային, պիտի կարողանանք վերակերտել մեր գրական կյանքը և վերափոխել մեզ՝ մեր գրականության լավագույն էջերը, նոր գրական կոթողները այլևս գրվելու են Թումանյանի զննող ու բարի հայացքի ներքո...

⁴⁰ Մարիամ Խուրշուդյան, Գոգոլ անձրևը, «Լուսակն» հրատարակչություն, Ե., 2019:

⁴¹ Д. Благой, Литература и действительность. Вопросы теории и истории литературы, М., 1959, с. 402.

Աբգար Ափինյան

ОВАНЕС ТУМАНЯН И СОВРЕМЕННАЯ АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

Резюме

Ключевые слова: *Ованес Туманян, современная армянская литература, традиции и новаторство, молодые армянские писатели, творческая личность*

В статье рассматриваются вопросы современной литературы, литературного наследия, традиций и новаторства. Представлена Туманьяновская традиция сегодня и ее значение в современной литературе. Открыт общий разговор о «носителях» этой традиции и об «отходах» от тумановской традиции. Оценивая современные литературные феномены на основе научных критериев художественности литературы, автор показывает, что Туманьяновская традиция в значительной степени способствует развитию новой литературы и установлению литературного плюрализма в современном литературном процессе, самобытности молодых авторов.

Abgar Apinyan

HOVHANNES TUMANYAN AND MODERN ARMENIAN LITERATURE

Summary

Key words: *Hovhannes Tumanyan, modern Armenian literature, tradition and innovation, young Armenian writers, creative personality*

The article discusses the issues of modern literature, literary heritage, literary traditions and innovations. Tumanyan's traditions today and its significance in modern literature are presented In this artice. The author is opening a general conversation about the “bearers” of that tradition and the “departures” from Tumanyan. Assessing the contemporary literary phenomena on the basis of scientific criteria, the author also shows that Tumanyan's tradition greatly contributes to the development of new literature and to the establishment of literary pluralism in modern literary process, it also shows the way to the identity of young authors.